

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՄՆ ԴԵՍՊԱՆԻՆ

Նոյեմբերի 3-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում ԱՄՆ արտակարգ և լիազոր նորանշանակ դեսպան Մարի Յովանովիչին:

Ողջունելով դեսպանի այցը Ս. Էջմիածին՝ Վեհափառ Հայրապետն իր բարեմաղթանքները հայտնեց նորանշանակ դեսպանին՝ հաջողություններ մաղթելով իր առաքելության ընթացքում: Հայոց Հայրապետը վստահություն հայտնեց, որ դեսպանն իր գործունեությամբ կնպաստի երկու պետությունների հարաբերությունների առավել զորացմանը: Նորին Սրբությունը նաև ի դեմս դեսպանի շնորհակալություն հայտնեց ԱՄՆ իշխանություններին Հայաստանին բերած զորակցության համար:

Տիկին Յովանովիչը իր հերթին շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետին օրհնության և բարեմաղթանքների համար՝ վստահեցնելով, որ իր կարելին պիտի անի երկու ժողովուրդների մերձեցման համար:

Հանդիպման ընթացքում անդրադարձ կատարվեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացին, հայ-թուրքական հարաբերություններին և հասարակական կյանքում Եկեղեցու դերակատարությանը: